

(79-80) Երկրի տարածքը կազմում է 30 000 կմ², երկաթուղիների երկարությունը՝ 6000 կմ, բեռնափոխադրումների ծավալը՝ 80000 տ,բեռնափոխադրման միջին հեռավորությունը 200կմ:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

79 Որոշել երկաթուղային ցանցի խտությունը:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

80 Որոշել բեռնաշրջանառությունը:

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1) Նկարում ո՞ր տառով է տրված հյուսիսային բևեռային շրջագիծը:

- 1) Ա
- 2) Գ
- 3) Դ
- 4) Բ



2) Երկու քաղաքների միջև եղած իրական հեռավորությունը 600 կմ է: Որք՞ան կլինի նրանց միջև հեռավորությունը 1:3000000 մասշտաբի քարտեզի վրա.

- 1) 30 սմ
- 2) 10 սմ
- 3) 25 սմ
- 4) 20 սմ

3) Երկրագնդի միջին շառավիղը կազմում է.

- 1) 6357 կմ
- 2) 6371 կմ
- 3) 6378 կմ
- 4) 6351 կմ

4) Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Երկիրն Արեգակին ամենամոտ մոլորակն է:
- 2) Ամբողջ Երկրագնդի, նրա մայրցամաքների կամ երկրների ընդհանրացված պատկերը թղթի վրա կոչվում է հատակագիծ:
- 3) Երկրի որևէ կետի հեռավորությունը գրոյական միջօրեականից՝ արտահայտած աստիճաններով կոչվում է աշխարհագրական երկայնություն:
- 4) Անվանական մասշտաբը արտահայտվում է կոտորակի տեսքով:

5) Այն հարթավայրը, որը գտնվում է մինչև 200 մ բացարձակ բարձրության վրա, կոչվում է.

- 1) ցածրավայր
- 2) սարահարթ
- 3) բարձրավայր
- 4) դաշտավայր

75) Քարտեզի վրա որ տառին են համապատասխանում բնակչության առավել բարձր բնական աճ ունեցող երկրները.

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



76) Օդի բացարձակ խոնավությունը 15գ/ խոր.մ: Օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 20գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

(77-78) Գետի ակունքի բարձրությունը 2000 մ է , իսկ գետաբերանինը՝ 500մ: Նրա երկարությունը 300կմ է:

77) Որոշել գետի անկումը:


78) Որոշել գետի միջին թեքությունը:

73 Բուսական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում չէ.

- 1) Ցանքաշրջանառության կազմակերպումը:
- 2) «Կարմիր գրքի» ստեղծումը
- 3) Հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը
- 4) Արհեստական անտառների ստեղծումը

74 Կլիմայական ո՞ր գոտում են գտնվում 3Ա, 3Բ և 3Գ թվերով նշված տարածքները:

- 1) արկտիկական
- 2) մերձարևադարձային
- 3) բարեխառն
- 4) արևադարձային



6 Ցամաքի բնական զոգավորությունը, որը լցված է ջրով և անմիջական կապ չունի ծովի հետ, կոչվում է .

- 1) ճահիճ
- 2) գետ
- 3) ջրամբար
- 4) լիճ

7 Կլիմայական քարտեզի վրա հավասար ջերմաստիճան ունեցող վայրերը միացնող գիծը կոչվում է.


- 1) իզոթար
- 2) իզոթաթ
- 3) հորիզոնական
- 4) իզոթերմ

8 Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 27°C է, իսկ գագաթին՝ 9°C: Լեռան հարաբերական բարձրությունը կլինի.(հաշվարկը կատարել 6° -ով).

- 1) 2000մ
- 2) 3000մ
- 3) 1000մ
- 4) 4000մ


9 Նկարում պարկերված է.

- 1) գետինկլիլինալ
- 2) հորստ
- 3) գրաբեմ
- 4) պլատֆորմ



10 Նկարում պատկերված է.

- 1) անտիցիկլոն
- 2) մուսսոն
- 3) ցիկլոն
- 4) պասսատ



11 Աֆրիկայի արևելքում գտնվող կղզին է.

- 1) Նոր Երկիրը
- 2) Թասմանիան
- 3) Մադագասկարը
- 4) Կուբան

12 **Հյուսիսային Ամերիկայի լեռներն են.**

- 1) Մեծ Կովկասը և Սկանդինավյանը
- 2) ժայռոտը և Ապալաչները
- 3) Մեծ Ջրբաժանը և Անդերը
- 4) Կոորդիլիերաները և Ալպերը

13 **Այդ բնական զոնան ունի լավ արտահայտված երկու սեզոն՝ խոնավ, տաք ամառներ , տաք և չոր ձմեռներ: Լայն տարածում ունեն Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում: Այդ բնական զոնան է.**

- 1) տունդրան
- 2) անապատը
- 3) տայգան
- 4) սավանան

14 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Հուանիե և Յանգզի գետերը պատկանում են Ատլանտյան օվկիանոսի ավազանին:
- 2) Աֆրիկայի ամենաերկար գետը Ջամբեզին է:
- 3) Մեծ Ջրբաժան լեռների առանձին գագաթներ ծածկված են սառցադաշտերով:
- 4) Կամերուն հրաբուխը գտնվում է Աֆրիկայում:

15 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Հարավային Ամերիկայի ամենաջրառատ գետը Ամազոնն է:
- 2) Հարավային Ամերիկան ամբողջությամբ գտնվում է արևմտյան կիսագնդում:
- 3) Հարավային Ամերիկայի ամենաբարձր լեռը Կիլիմանջարոն է:
- 4) Անդերը երիտասարդ բարձր լեռներ են:

16 **«Թերակղզի – մայրցամաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Արաբական - Եվրասիա
- 2) Սոմալի - Ավստրալիա
- 3) Կալիֆոռնիա - Աֆրիկա
- 4) Կանչատկա – Հյուսիսային Ամերիկա

17 **«Անապատ – մայրցամաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Գոբի - Եվրասիա
- 2) Կալահարի - Ավստրալիա
- 3) Ատակամա – Հյուսիսային Ամերիկա
- 4) Մեծ Ավազային - Հարավային Ամերիկա

18 **Ատլանտյան օվկիանոսում գտնվող կղզիներ են.**

- 1) Իսլանդիան և Իռլանդիան
- 2) Մադագասկարը և Շրի Լանկան
- 3) Նոր Զելանդիան և Նոր Գվինեան
- 4) Սախալինը և Սիցիլիան

67 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) ՀՀ սննդի արդյունաբերության զարգացմանը նպաստել է անտառային ռեսուրսների առկայությունը:
- 2) ՀՀ քիմիական արդյունաբերության զարգացմանը նպաստել է ուրբանիզացման բարձր մակարդակը:
- 3) ՀՀ մեքենաշինության զարգացմանը նպաստել է աշխատանքային ռեսուրսների առկայությունը:
- 4) ՀՀ էներգետիկայի զարգացմանը նպաստել է վառելիքային ռեսուրսների առկայությունը:

68 **Ընտրել լանդշաֆտային գոտիների ճիշտ շարքը՝ ըստ նրանց բացարձակ բարձրությունների աճման.**

- 1) կիսաանապատային, չոր լեռնատափաստանային, լեռնաանտառային, ալպյան:
- 2) չոր լեռնատափաստանային, ալպյան, լեռնաանտառային, կիսաանապատային:
- 3) լեռնաանտառային, կիսաանապատային, ալպյան, չոր լեռնատափաստանային:
- 4) ալպյան, չոր լեռնատափաստանային, լեռնաանտառային, կիսաանապատային:

69 **Ի՞նչն է ընդհանուր Շիրակի և Արարատի մարզերի համար.**

- 1) Զգալի տարածում ունեն լեռնատափաստանները:
- 2) Սահմանակից են Թուրքիային:
- 3) Հարուստ են տուֆի պաշարներով:
- 4) ՀՀ ամենախտաբնակ մարզերն են:

70 **Աղտոտված օդային ավազան ունեցող քաղաքներն են.**

- 1) Գյումրին և Ջերմուկը
- 2) Դիլիջանը և Վանաձորը
- 3) Ծաղկաձորը և Երևանը
- 4) Հրազդանը և Ալավերդի

71 **Անտառային ռեսուրսներով ապահովված երկրներն են.**

- 1) Ճապոնիան և Ուզբեկստանը
- 2) Շվեդիան և Կանադան
- 3) Եգիպտոսը և Բրազիլիան
- 4) Հնդկաստանը և Արգենտինան

72 **Ընտրել ճիշտ պատասխանը. «Ջերմոցային էֆեկտը» պայմանավորված է.**

- 1) սառցադաշտերի հալմամբ
- 2) արեգակնային ճառագայթների կտրուկ ավելացմամբ
- 3) մթնոլորտում ջրային գոլորշու և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ
- 4) մթնոլորտի շրջանառությամբ

62 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Բնակչության ծերացման գործընթացն առավել բնորոշ է զարգացող երկրներին:
- 2) Մի ազգի մեջ մյուսի ծուլունը՝ նրա լեզուն, մշակույթը և ազգային սովորույթները յուրացնելու միջոցով կոչվում է ազգային համախմբում:
- 3) Գյուղական տարաբնակեցման ցրված ձևերը տարածված են ԱՄՆ-ում, Կանադայում և Ավստրալիայում:
- 4) Ռասաները միմյանցից տարբերվում են մարդկանց թվաքանակով, լեզվով և կրոնով:

63 Ընտրել սխալ պատասխանը Ռուսաստանի համար.

- 1) Բուսաբուծության առաջատար ճյուղը հացահատիկային տնտեսությունն է:
- 2) Տարածքի մեծությամբ աշխարհում առաջինն է:
- 3) Նավթի և գազի արդյունահանմամբ աշխարհի առաջատար երկրներից է:
- 4) Բնակչության թվով աշխարհում երրորդն է:

64 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) ՀՀ տարածքի 20%-ը զբաղեցնում են անտառները:
- 2) Տարվա տաք կեսին Հայաստանի տարածք են ներխուժում արկտիկական օդային զանգվածները:
- 3) ՀՀ-ն հարևան տարածքների նկատմամբ ունի ավելի մեծ միջին բարձրություն:
- 4) ՀՀ գետերը մեծամասամբ նավարկելի են և ունեն հոսքի կայուն ռեժիմ:

65 «Գետ-ջրամբար» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Արփա- Սպանդարյանի
- 2) Քասախ- Ապարանի
- 3) Որոտան – Կեչուտի
- 4) Ազատ- Տոլորսի

66 Ընտրել հանքավայրի և հանքատեսակների անվանումների տրված համապատասխանության ճիշտ շարքը.

- | | |
|------------|------------------|
| 1. Սոթք | ա. պղինձ |
| 2. Կապան | բ. պղնձամոլիբդեն |
| 3. Ազարակ | գ. երկաթ |
| 4. Սվարանց | դ. ոսկի |

- 1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 2) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
- 3) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ
- 4) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ

19 Քարտեզի վրա Բրազիլիական սարահարթը ո՞ր տառով է նշված.

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



20 Քարտեզի վրա Չիլի պետությունը ո՞ր տառով է նշված.

- 1) Ը
- 2) Ե
- 3) Զ
- 4) Է

21 Պետական կառավարման այն ձևը, երբ գերագույն իշխանությունը փոխանցվում է ժառանգական իրավունքով, կոչվում է.

- 1) դաշնություն
- 2) միապետություն
- 3) հանրապետություն
- 4) համադաշնություն

22 Որևէ ժամանակահատվածում բնակչության ծնելիության և մահացության տարբերությունը կոչվում է.

- 1) ժողովրդագրական պայթյուն
- 2) բնակչության մեխանիկական աճ
- 3) բնակչության բնական աճ
- 4) միգրացիա

23 Դա գունավոր մետաղածուլության ճյուղ է; Այն հումքատար է, ուստի կողմնորոշվում է դեպի հանքավայրերը: Այդ ճյուղն է.

- 1) ոսկու ծուլում
- 2) պողպատի ծուլում
- 3) պղնձի ծուլում
- 4) ալյումինի ծուլում

24 Երկրի տարածքը կազմում է 30000 կմ², բնակչության թիվը՝ 4.2 մլն: Բնակչության միջին խտությունը կլինի.

- 1) 60 մարդ/կմ²
- 2) 140 մարդ/կմ²
- 3) 80 մարդ/կմ²
- 4) 160 մարդ/կմ²

25 «Ժողովուրդ-լեզվախումբ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.

- 1) պարսիկներ - իրանական
- 2) վրացիներ – թուրքական
- 3) ուկրաինացիներ – սլավոնական
- 4) իսպանացիներ – ռոմանական

26 «Հանքային ռեսուրս - առաջատար երկիր» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) գազ – Ռուսաստան
- 2) նավթ – Թուրքիա
- 3) երկաթ- Ճապոնիա
- 4) ածուխ – Ֆրանսիա

27 «Պետություն-մայրաքաղաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.

- 1) Մեծ Բրիտանիա – Լոնդոն
- 2) Բրազիլիա - Ռիո դե Ժանեյրո
- 3) Իրան – Թեհրան
- 4) Հնդկաստան - Դելի

28 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Գերմանիան վարում է բնակչության բնական աճը կրճատող ժողովրդագրական քաղաքականություն:
- 2) Գերմանիայի արդյունաբերության առաջատար ճյուղը մետաղաձուլությունն է:
- 3) Գերմանիայի գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 4) Գերմանիան գտնվում է տնտեսության զարգացման հետարդյունաբերական փուլում:

29 Նոսր բնակեցված երկրներ են.

- 1) Գերմանիան և Ֆրանսիան
- 2) Հայաստանը և Բելգիան
- 3) Ավստրալիան և Կանադան
- 4) Ինդոնեզիան և Ճապոնիան

30 Դաշնային պետություններ են.

- 1) Թուրքիան և Գերմանիան
- 2) Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան
- 3) Ռուսաստանը և ԱՄՆ-ը
- 4) Հնդկաստանը և Ճապոնիան

57 Ընտրել սխալ պատասխանը.

- 1) Մակընթացային ամենաբարձր ալիքը գրանցվել է Ֆանդի ծովածոցում:
- 2) Աշխարհի ամենամեծ ջրհավաք ավազանն ունի Ամազոն գետը:
- 3) Աշխարհի ամենաերկար գետը Նեղոսն է:
- 4) Աշխարհի ամենաաղի ծովը Մեռյալն է:


58 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Լեռնային շրջաններում ըստ բարձրության մթնոլորտային տեղումների քանակը ավելանում է:
- 2) Ներքնոլորտում մթնոլորտային ճնշումն ըստ բարձրության չի փոփոխվում:
- 3) Եղանակի բոլոր փոփոխությունները տեղի են ունենում վերնոլորտում:
- 4) Պարզկա եղանակին օդի ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը ավելի փոքր է, քան անպամած օրերին:

59 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Ոչ արտադրական(սպասարկման) ոլորտի ճյուղերին բնորոշ է բացառապես գծային տեղաբաշխումը:
- 2) Գյուղատնտեսական արտադրությունն ունի գերազանցապես կետային տեղաբաշխում:
- 3) Տրանսպորտի համար բնորոշ է գծային տեղաբաշխումը:
- 4) Արդյունաբերության համար բնորոշ է համատարած տեղաբաշխումը:

60 Որ դիագրամում է պատկերված ԱՄՆ –ի տնտեսության ճյուղային կառուցվածքը.



61 Կղզեխմբային (արշիպելագային) պետություն Ասիայում: Աշխարհում բնակչության թվով ամենամեծ մահմեդական երկիրն է: Այդ պետությունն է.

- 1) Ֆիլիպինները
- 2) Սաուդյան Արաբիան
- 3) Ճապոնիան
- 4) Ինդոնեզիան

51 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) ՀՀ-ի տարածքը գտնվում է երրորդ ժամային գոտում
- 2) Հունիսի 22-ին Արեգակը զենիթային դիրք է գրավում հասարակածի բոլոր կետերի վրա:
- 3) Երկրի տարեկան պտույտի հետևանքներից է ցերեկվա և գիշերվա առաջացումը:
- 4) Անսաթվի փոփոխման գիծը համընկնում է Գրինվիչի(զրոյական) միջօրեականին:

52 Դեկտեմբերի 22-ին Արեգակի դիրքը հորիզոնի նկատմամբ ամենաբարձրն է.

- 1) հս. լ. 23° 30'
- 2) հվ. լ. 23° 30'
- 3) հվ. լ. 90°
- 4) հվ. լ. 66° 30'

53 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Մայրցամաքային տիպի երկրակեղևը երկշերտ է :
- 2) Երկրի ամենավերին և կարծր շերտն անվանում են միջնապատյան:
- 3) Գրանիտը և մարմարը նստվածքային ծագման ապարներ են:
- 4) Երկրակեղևի հզորությունը լեռներում ավելի մեծ է, քան հարթավայրերում:

54 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ զուգորդությունը.

- 1) տայգա- պողոզլային հողեր-եղևնի, սոճի
- 2) տունդրա-կմախքային հողեր-լորենի, հացենի
- 3) անապատ- սևահողեր - օշինդր, ուղտափուշ
- 4) տափաստան- մոխրագորշ հողեր- փետրախոտ, սիզախոտ

55 Այդ լիճը գոյացել է Արևելաաֆրիկական Մեծ բեկվածքում, ունի գրաբենային (տեկտոնական) ծագում, խորությամբ աշխարհում երկրորդն է:

- 1) Վիկտորիա
- 2) Տանգանիկա
- 3) Չադ
- 4) Նյասա

56 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Տյան-Շանը և Ալթայը երիտասարդ լեռներ են:
- 2) Հյուսիսային Ամերիկայի մեծ մասը մտել է Գոնդվանայի կազմի մեջ:
- 3) Երկրակեղևի պլատֆորմային շրջաններում տիրապետում են ռելիեֆի հարթ ձևերը:
- 4) Հարավային Ամերիկայի մեծ մասը մտել է Լավրասիայի կազմի մեջ:

31 «Արտադրություն - արդյունաբերության ճյուղ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) կոշիկի արտադրություն – թեթև արդյունաբերություն
- 2) պլաստմասսայի արտադրություն-մետաղածուլություն
- 3) կաուչուկի արտադրություն-էներգետիկա
- 4) պղնձի արտադրություն – քիմիական արդյունաբերություն

32 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Ջարգացած երկրների արդյունաբերության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է:
- 2) Ջարգացած երկրների տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է:
- 3) Աշխարհում հացահատիկային մշակաբույսերի մեջ ցանքատարածությամբ առաջին տեղը գրավում է եգիպտացորենը:
- 4) Համաշխարհային բեռնաշրջանառության մեծ մասը բաժին է ընկնում երկաթուղային տրանսպորտին:

33 Ուրբանիզացման մակարդակն ամենաբարձրն է.

- 1) Վրաստանում և Թուրքիայում
- 2) Հնդկաստանում և Արգենտինայում
- 3) Ավստրալիայում և Մեծ Բրիտանիայում
- 4) Չինաստանում և Իրանում

34 Երկաթաքարի հանույթով առաջատար երկրներ են.

- 1) Ռուսիան և Բելառուսը
- 2) Ճապոնիան և Չինաստանը
- 3) Բրազիլիան և Կանադան
- 4) Սաուդյան Արաբիան և Եգիպտոսը

35 Հայկական բարձրավանդակի (միջնաշխարհի) լեռնագրական միավոր չէ.

- 1) Միջլեռնային գոգավորությունները
- 2) Հայկական հրաբխային բարձրավանդակը
- 3) Ներքին Տավրոսի լեռնային համակարգը
- 4) Փոքր Կովկասի լեռնային համակարգը

36 «Լճային գոգավորություն - ծագում» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ուրմիա- տեկտոնական
- 2) Նեմրուք -սողանքափլվածքային
- 3) Արփի – խառնարանային
- 4) Սևանա-սառցադաշտային

37 ՀՀ ծալքաբեկորավոր լեռներից են.

- 1) Ջավախքը և Վարդենիսը
- 2) Գեղաման և Գուգարացը
- 3) Վայքը և Ջանգեզուրը
- 4) Արագածը և Փամբակը

38 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) ՀՀ-ում բացակայում են դաշտավայրերը:
- 2) ՀՀ –ում ամռանը ներթափանցում են հասարակածային օդային զանգվածները:
- 3) ՀՀ տարածքը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի տարածքի մոտ կեսը:
- 4) ՀՀ լեռնամասնառային լանդշաֆտները մեծ տարածում ունեն հրաբխային շրջաններում:

39 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) ՀՀ-ն բնակչության խտությամբ զիջում է բոլոր սահմանակից երկրներին:
- 2) ՀՀ-ն մշտական բնակչության վերին սահմանը 2400 մ-ն է:
- 3) ՀՀ –ի ամենախիտ բնակեցված մարզերն են Տավուշը և Սյունիքը:
- 4) ՀՀ –ում ազգային փոքրամասնություններից են ֆրանսիացիները և չինացիները:

40 ՀՀ մետալուրգիական համալիրի ճյուղ է.

- 1) անագի արտադրությունը
- 2) մանգանի արտադրությունը
- 3) մոլիբդենի արտադրությունը
- 4) երկաթի արտադրությունը

41 Գեղարքունիքի մարզի բուսաբուծության առաջատար ճյուղերն են.

- 1) պտղաբուծությունը և շաքարի ճակնդեղի մշակությունը
- 2) հացահատիկի և կարտոֆիլի մշակությունը
- 3) բամբակենու և ծխախոտի մշակությունը
- 4) խաղողագործությունը և բանջարաբուծությունը

42 ՀՀ –ում երկաթուղային հանգույցներ են .

- 1) Վանաձորը և Ստեփանավանը
- 2) Հրազդանը և Գյումրին
- 3) Կապանը և Գորիսը
- 4) Արարատը և Արտաշատը

43 ՀՀ դաշտավարության վերին սահմանն է.

- 1) 2200 մ
- 2) 1400մ
- 3) 1800 մ
- 4) 2800 մ

44 Էներգակիր ռեսուրսներ չեն.

- 1) տուֆն ու կրաքարը
- 2) ուրանը և այրվող թերթաքարը
- 3) նավթն ու բնական գազը
- 4) տորֆն ու քարածուխը

45 Գյուղատնտեսական հողահանդակներ չեն.

- 1) բազմամյա տնկարկները
- 2) վարելահողերը
- 3) անտառները
- 4) արոտավայրերը

46 Հողերի էրոզիայի առաջացման պատճառներից է .

- 1) այգեգործության զարգացումը
- 2) հացահատիկային բույսերի մշակությունը
- 3) ցանքաշրջանառությունը
- 4) անտառահատումները

47 Մթնոլորտի բնածին աղտոտման աղբյուր է.

- 1) քիմիական գործարանները
- 2) հրաբուխները
- 3) տրանսպորտը
- 4) ջերմաէլեկտրակայանները

48 Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ բարձրության կոչվում է.

- 1) հրաբխականություն
- 2) հորիզոնական զոնայականություն
- 3) վերընթաց գոտիականություն
- 4) ֆիզիկաաշխարհագրական շրջանացում

49 Քարտեզի վրա Աղստև գետը ո՞ր տառով է նշված.

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ

50 Քարտեզի վրա Վայք քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ը
- 2) Ե
- 3) Զ
- 4) Է

